

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ  
2020**

**«Դիվիզանում խոցելի անձանց աջակցության մասնագիտական ուսուցման և  
սոցիալական ձեռնարկատիրության կենտրոնի ստեղծման ծրագրի» ստորագրման  
արարողություն**

2021 թ. մարտի 19-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում տեղի ունեցավ «Դիվիզանում խոցելի անձանց աջակցության մասնագիտական ուսուցման և սոցիալական ձեռնարկատիրության կենտրոնի ստեղծման ծրագրի» մինչև 74,879 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և «Հայաստանի Համայնքների Միություն» ՀԿ նախագահ Էմին Երիցյանի կողմից: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, պարոն Ռուբեն Սարգսյանի և Դիվիզան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, պարոն Դավիթ Սարգսյանի ներկայությամբ:

Ծրագրի նպատակն է կայուն աշխատանքային հնարավորություններ ստեղծել Տավուշի մարզի Դիվիզան համայնքի հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար՝ հիմնելով սոցիալական ձեռնարկատիրության ՄՁ Լանդրոմատ լվացքատուն-սրճարանը: Հիմնելով նաև սոցիալական ձեռներեցության կրթական հար-կենտրոն, սույն նախագիծը կունենա նաև սոցիալական ներդրում, այն է կկազմակերպվի դասընթացներ և կտրամադրվի փորձագիտական խորհրդատվություն և կիթանցի սոցիալական ձեռներեցությունը՝ զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող Դիվիզան քաղաքում: Արդյունքում, տվյալ ծրագիրն կունենա տարեկան ավելի քան 360 շահառու:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ պարոն Սարգսյանը իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը և ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը, ինչպես նաև Հայաստանի Համայնքների Միության ներկայացուցիչներին՝ համայնքի զարգացման ոլորտում ներդրման և ակտիվ մասնակցության համար, ինչը խթանում է ներառական մասնագիտական ուսուցման և հարմարավորականության ծրագրեր: Պարոն Սարգսյանը նշեց, որ ծրագիրը մեծապես կօգնի Դիվիզանում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման նոր հնարավորությունների ստեղծմանը:

Իր հերթին դեսպան Յամադան նշեց, որ Ճապոնիայում սոցիալական ձեռնարկությունները շատ ավելի շատ են դիտարկվում որպես մարդկանց բարեկեցությունը խթանելու հիմնական կազմակերպություններ, որոնք կարևոր դեր ունեն կայուն ապագա կերտելու գործում: Արտացոլելով

Ճապոնիայի կառավարության «Մարդկային անվտանգություն» հայեցակարգն իրականացնելու վճռական հանձնառությունը, այս ծրագիրը մարդկանց բարեկեցության և անվտանգության բարձրացման հստակ դրսևորում է: Դեսպանը նաև հավելեց, որ այս աջակցությունը ոչ միայն կլինի քայլ Հայաստանի կայուն տարածաշրջանային զարգացման գործում, այլև կդառնա բարեկամության և փոխադարձ համակրանքի մարմնացում, որն ավանդաբար կազմում է Ճապոնիա-Հայաստան հարաբերությունների հիմքը:

Պարոն Երիցյանն իր խոսքում նշեց, որ այս ծրագիրը հավակնում է դառնալ պետական, տեղական և մասնագիտական կառույցների համագործակցության օրինակ և այն կիրականացվի նաև այլ մարզերում: Պարոն Երիցյանը նաև իր երախտագիտությունը հայտնեց Ճապոնիայի կառավարությանը, ինչպես նաև Հայաստանում Ճապոնիայի դեսպանատանը աջակցության համար:



ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար, պարոն Սարգսյանի ելույթը



Դեսպան Յամադայի ելույթը



«Հայաստանի համայնքների միություն» ՀԿ նախագահ, պարոն Էմին Երիցյանի ելույթը



Դեսպան Յամադան դրամաշնորհային պայմանագիրը ստորագրելիս



Պարոն Երիցյանը  
դրամաշնորհային պայմանագիրը ստորագրելիս



Արարողության հարգարժան մասնակիցները